ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 2017 Թ.

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

Գլոբալ միջազգային զարգացումներ: Վերջին տարիներին բնորոշ ռուս-թուրքական հարաբերությունների վայրէջքներն ու վերելքները պայմանավորված են միջազգային ասպարեզում ուժերի վերադասավորմամբ, ինչպես նաև անցած տարում ՌԴ և ԱՄՆ արտաքին քաղաքական ռազմավարության նպատակների իրականացման ընթացքով:

2017 թ. միջազգային քաղաքական իրադարձությունների ամփոփմամբ կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանը շարունակում էր հավատարիմ մնալ նախորդ տարիների իր որդեգրած արտաքին քաղաքականությանը: Պուտինի կառավարման սկզբից ևեթ այն նպատակաուղղված էր երկու խնդիրների լուծմանը: Առաջին՝ ողջ հետխորհրդային տարածքում ՌԴ ազդեցության վերականգնում, երկրորդ՝ միջազգային տնտեսական և ռազմական քաղաքականության հանգուցային հարցերի լուծման գործընթացում առաջնային դերակատարման սասանված դիրքերի ամրապնդում: Եվրոպական միության, Չինաստանի և Ճապոնիայի նման համաշխարհային ուժային կենտրոնների ռեսուրսների ծավալը ի չիք է դարձնում Ռուսաստանի գլոբալ մակարդակով լիդերության վերականգնման հավակնությունները, ինչպես որ նախորդ՝ երկբևեռ աշխարհակարգում էր:

Առաջնայնության պահպանման ռազմավարությունը Ռուսաստանի համար ունի նաև ԱՄՆ-ի լիդերության զսպման առանձնահատուկ նպատակ, որովհետև նախորդ երկու տասնամյակների ընթացքում ամերիկյան վարչակարգերի գործողությունները Հարավսլավիայում, Աֆղանստանում, Իրաքում, Սիրիայում, Լիբիայում, ինչպես նաև «դեմոկրատիայի ընդլայնման», «ռեժիմների փոխման», «գունավոր հեղափոխությունների» և նմանատիպ այլ արտաքին քաղաքական ծրագրերի իրականացման ամերիկյան քաղաքականության տրամաբանությունը տանում էին դեպի գլոբալ լիդերության հաստատմամբ միաբևեռ աշխարհակարգ: Իհարկե, քաղաքագիտական հանրությունը դեռ երկար ժամանակ կքննարկի հետսառըպատերազմյան ամերիկյան ռազմավարության ձեռքբերումներն ու ձախողումները, բայց մի բան պարզ է. այս ուղղությամբ ամեն ինչ չէ, որ հաջողությամբ է ավարտվել: Անվիճելի ճշմարտություն է, որ Վաշինգտոնին այդպես էլ չհաջողվեց Ռուսաստանին և Չինաստանին զսպել և երկրորդ պլան մղել: «Չարիքի ա-

ռանցքի» մեջ դասված երկու պետությունները՝ Իրանը և Հյուսիսային - Կորեան, շարունակում են իրենց հակաարևմտյան քաղաքականությունը: Աշխարհի բազմաբևեռայնությունը մնաց, իսկ նոր աշխարհակարգի համակարգային ձևափոխումները օբյեկտիվորեն սահմանափակեցին հանգուցային տարածաշրջաններում վճռական և թելադրող դերակատարման համար անհրաժեշտ ԱՄՆ ռեսուրսային հնարավորությունները: Օրինակ՝ ԱՄՆ-ն չկարողանալով կասեցնել Չինաստանի օրավուր աճող հզորությունը, ստիպված է համակերպվել ոչ միայն նրա, այլև Արևելյան և Հարավարևելյան Ասիայում Հարավային Կորեայի, Ճապոնիայի, Հնդկաստանի և Ֆիլիպինների համեմատաբար անկախ արտաքին քաղաքականության իրականացմանը: Հատկապես լուրջ առաջընթաց ունի չին-ամերիկյան հակասությունների վրա խաղացող Հնդկաստանը, որն այսօր վարում է անկախ արտաքին քաղաքականություն և մոտ ապագայում ևս շարունակելու է այն: Փաստորեն, ԱՄՆ-ի «պատմական» հաղթանակի ազդարարումից երկու տասնամյակ անց աշխարհը սկսել է զարգանալ այնպիսի հունով, որը մասամբ է համապատասխանում ԱՄՆ շահերին: Սկսվել է ուժերի վերադասավորում՝ ի վնաս արևմտամետ ուժային կենտրոնների, որոնք ավելի հաճախ են ընդդիմանում ամերիկյան դիկտատին և հեգեմոնիային: Պատահական չէ, որ 2017 թ. ԱՄՆ արտաքին քաղաքական ուղղությունների շուրջ տեղի ունեցած դիսկուրսի ընթացքում հաճախակի էին հնչում Սպիտակ տան ղեկավարների անկանխատեսելիության, անփորձության, նաև անգործունակության մասին տեսակետներ:

Մերձավորարևելյան իրադրություն: ԱՄՆ ռազմավարության անկատարությունը նկատելի է նաև Մերձավոր Արևելքում: Կրեմլի ռազմավարները 2017 թ. ուշադիր հետևում էին նաև մերձավորարևելյան տարածաշրջանում ամերիկյան ազդեցության թուլացման նախանշաններին: Իրանի ազդեցության և դիրքերի պահպանումը հնարավոր է դարձնում ավելի կրճատել ամերիկյան ազդեցության գոտիները: Փորձագետների կարծիքներում գերիշխում է այն մտայնությունը, որ Իրանին զսպելու քաղաքականությունը դեռ չի ավարտվել: Դրանով էլ կարելի է բացատրել Թրամփի կողմից միջուկային պայմանագրից հրաժարվելու մտադրությունների մասին հայտարարությունները[1]: Նկատվում են նաև որոշ տեղաշարժեր ԱՄՆ դաշնակիցների մոտ: Սաուդյան Արաբիան և Իսրայելը արտաքուստ ողջունում են Վաշինգտոնի քայլերն ու հռետորաբանությունը, բայց միաժամանակ շարունակում են ընդլայնել իրենց արտաքին քաղաքականության այլընտրանքների շրջանակը՝ օրակարգում ընդգրկելով նաև անվտանգության ոլորտը: Գրեթե նույն գործելակերպն է բնորոշ Թուրքիայի, Եգիպտոսի և Իրաքի

[1] Տե՛ս **Тарасов С.** Для США врагом номер один становится Иран // https://regnum.ru/news/polit/2266645.html

արտաքին քաղաքականությանը:

Ռուս-թուրքական հարաբերությունների զարգացման նոր միտումները պայմանավորված են ոչ միայն ՌԴ և ԱՄՆ արտաքին քաղաքական ռազմավարության նպատակների և միջազգային ու տարածաշրջանային ասպարեզներում ուժերի նոր հարաբերակցությամբ, այլև Թուրքիայի էներգետիկ ռազմավարության ավանդական պլաններով: Անկարան շատ համառ է դեպի Եվրոպա էներգակիրների մատակարարման ծրագրերում թուրքական ներկայության ընդլայնման քաղաքականության մեջ: Միջազգային նշանակության էներգետիկ հանգույց դառնալու ձգտումը (2012 թ. Ստամբուլում ստորագրվեց Տրանսանատոլիական գազատարի՝ TANAP կոչված թուրք-ադրբեջանական համաձայնագիրը) ուղղակիորեն ազդում է ռուս-թուրքական ներկա հարաբերությունների ապագայի վրա[2]: Չեն փոխվել նաև Կովկասում, Միջին Ասիայում և հետխորհրդային տարածքի մի քանի այլ երկրներում տնտեսական, քաղաքական, մշակութային ազդեցության հաստատուն գոտիներ ստեղծելու - Թուրքիայի վաղեմի ձգտումը և աշխարհաքաղաքական նպատակները[3]:

Վայրէջքն ու վերելքը: Տարածաշրջանային քաղաքական համապատկերի լույսի ներքո փորձենք դիտարկել ռուս-թուրքական հարաբերությունները անցած տարում: Նախքան 2017 թ. ռուս-թուրքական իրողությունները անցնելը հիշենք, որ 2015 թ. նոյեմբերին թուրքական ուժերը խոցեցին ռուսական ռազմական ինքնաթիռը, ինչը գլխիվայր շրջեց երկկողմ հարաբերությունները: Ռուսաստանը սառեցրեց առևտրատնտեսական և էներգետիկ համագործակցությունն ու համատեղ ծրագրերը: Մտցվեց նաև միակողմանի վիզային ռեժիմ: Միջպետական բարենպաստ մթնոլորտ ստեղծելու համար արդի մեծ քաղաքականության մեջ վճռական նշանակություն ունեն քաղաքական վստահությունն ու հարգանքը, սակայն այդ միջադեպից հետո Պուտինի և Էրդողանի միջև եղած տանդեմը փլուզվեց՝ հասնելով զրոյական մակարդակի: Հաջորդ հարվածը ՌԴ դեսպան Անդրեյ Կարլովի սպանությունն էր: 2016 թ. թուրքական ապրանքների արտահանումը Ռուսաստան 2015 թ. համեմատ կրճատվեց 51,7 տոկոսով, իսկ ռուսական ապրանքներինը՝ 25,7 տոկոսով[4]: Հետևելով այս իրադարձությունների շուրջ մեդիա դաշտում ծավալված կատաղի «պատերազմին»՝ քաղաքական որոշ շրջանակներում և վերլուծական կենտրոններում շրջանառվում էր այն տեսակետը, որ երկկողմ հարաբերությունների վերականգնումը նախկին մակարդակով շատ դժվար և երկարատև գործընթաց է լինելու: Բայց այս կանխատե-

---

[2] Տե՛ս TANAP Press Release / 26.06.2012. / http://www.socar.com.tr/en/content/tanap-press-release-26062012, Turkey's Political Relations with Azerbaijan // Ministry of Foreign Affairs. Republic of Turkey. URL: http://www.mfa.gov.tr.

[3] Տե՛ս **Гаджиев А. Г**. К вопросу о значении Южного Кавказа во внешней политике Турции // http://www.iimes.ru/rus/stat/2010/07-07-10.htm, http://www.idefacto.am/page.php

[4] Տե՛ս **Тарасов С.** Путин решил поддержать Эрдогана // https://regnum.ru/news/polit/2247879.html

սումը չիրականացավ: 2017 թ. ռուս-թուրքական քաղաքական երկխոսությունը արագորեն վերականգնվեց, և անսպասելիորեն փոխվեցին դիվանագիտական ոճն ու զանգվածային լրատվամիջոցների քաղաքական հռետորաբանությունը: Հիմնական պատճառը Մերձավոր Արևելքում և հատկապես սիրական ճակատում ծավալվող իրադարձություններն էին: Հավանաբար որոշակի նշանակություն ունեցավ նաև 2016 թ. Թուրքիայում տեղի ունեցած պետական հեղաշրջման փորձը, որից հետո դեռևս ամբողջովին պարզ չեն Էրդողանի հակառուսական դիրքորոշման զգալիորեն մեղմանալու պատճառները: ՌԴ-ի և Թուրքիայի կառավարող վերնախավը կարևորեց փոխհամագործակցության անհրաժեշտությունը: Մոսկվայում Էրդողանի և Պուտինի 2017 թ. գարնանային հանդիպումից հետո երկկողմ համագործակցությունն ստացավ աննախադեպ նոր որակներ: Խոսքը ռազմական գերատեսչությունների և հատուկ ծառայությունների խորհրդատվություններ, տեղեկատվություն փոխանակելու և համատեղ գործողությունների մասին է:

Ռուս-թուրքական հարաբերությունների կտրուկ վայրէջքից հետո նման շրջադարձը կողմերի համար հեշտ չէր և ընթացավ փոխադարձ նահանջով և զիջումներով, գումարած նաև միջազգային հանրության առջև վարկանիշի անկումը և նույնիսկ ծաղրական գնահատականները բարոյականության և քաղաքականության մասին: Բայց, մեր կարծիքով, առավել շատ նահանջեց թուրքական կողմը: Ի վերջո Էրդողանը մեկնեց Մոսկվա, և ոչ թե Պուտինը Անկարա: Իհարկե մոսկովյան հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունների մեծ մասը դեռևս հրապարակայնացված չէ, բայց հետևելով վերլուծական-հետազոտական տարբեր կենտրոնների հրապարակումներին և իրադարձությունների հետագա ընթացքին՝ կարելի է ենթադրել, թե ինչ զիջումներ է արել թուրքական կողմը: Ամենայն հավանականությամբ՝ Էրդողանը համաձայնվել է հետևյալ պայմաններին. «Թուրքական հոսք» գազատարի կառուցում ռուսական պայմաններով, ՌԴ քաղաքացիների՝ առանց վիզայի մուտքի արտոնություն, թուրքական բանտերից այն լրագրողների ազատում, որոնք հիմնավորելով ռուսական մեղադրանքները՝ գրել էին «Իսլամական պետության» հետ թուրքական համագործակցության մասին, ռուսական ռազմանավերի անխափան տեղաշարժը Բոսֆոր-Դարդանել նեղուցներով՝ անկախ բեռնատարողությունից և առանց նախնական համաձայնության, ռազմական օդուժի տեղաշարժերի մասին գաղտնի տեղեկատվության ու կոդերի փոխանակում, ՆԱՏՕ-ի հակառուսական գործողություններում Թուրքիայի մասնակցության սառեցում և այլն[5]:

---

[5] Տե՛ս **Егорова Н.** Кабальные договора, на которые пошла Турция ради мира с Россией. 8 пунктов // http://mirtesen.ru/people/860946379, http://obzorsobitii.mirtesen.ru/url?e=simple_click&blog_post_id=43417165951&url=https%3A%2F%2Fcont.ws%2Fpost%2F339527

Արևմուտքը «նպաստում է» ռուս-թուրքական մերձեցմանը: Ռուս-թուրքական հարաբերությունների վերականգնման համար նպաստավոր ազդակները գալիս էին նաև Արևմուտքի հետ ՌԴ-ի և Թուրքիայի հարաբերությունների վատացումից: Ամերիկյան նոր վարչակարգը և ԵՄ առաջնորդները չվերացրին Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, և այստեղ սառույցը ոչ միայն չի հալվում, այլև ավելի է կարծրանում, որի մասին է վկայում 2018 թ. փետրվարին ԱՄՆ ֆինանսների նախարարության հրապարակած՝ ռուսաստանցի պետական և քաղաքական գործիչների, գործարարների՝ պատժամիջոցների ենթակա 210 անձ պարունակող «կրեմլյան ցուցակը»[6]: Միաժամանակ քաղաքական սուր առճակատում առաջացավ Թուրքիայի հետ, երբ թուրք քաղաքական գործիչներին արգելվեց Եվրոպայի թուրքական համայնքներում քարոզչական գործունեություն ծավալել 2016 թ. սահմանադրական փոփոխությունների և նախագահական կառավարման անցնելու կապակցությամբ: Բանը հասավ այնտեղ, որ Էրդողանը Նիդերլանդների և Գերմանիայի իշխանությունների դիրքորոշումը որակեց ֆաշիստական և նացիստական: Նրա խոսքերով՝ Եվրոպայում թևածում է ֆաշիզմի ոգին: Ի պատասխան՝ ԳՖՀ կանցլեր Մերկելը հայտարարեց, որ «Գերմանիային և Թուրքիային բաժանում են խորը հակասությունները»[7]: Սրան զուգահեռ՝ սկսվեց փախստականների հոսքը զսպելու՝ թուրքական կառավարության կատարած ծախսերի ու կրած զրկանքների համար ԵՄ-Թուրքիա քաղաքական առևտուրը, որի ընթացքում Էրդողանը եվրոպական առաջնորդների առջև դրեց խոստացված, բայց չվճարված գումարների ցուցակը[8]: Արդեն հաստատված իրողություն է նաև ԱՄՆ-ի հետ շահերի լուրջ բախումը: Այս գործընթացներում հստակ է, որ մերձավորարևելյան տարածաշրջանում Թուրքիան իր «անվտանգության գոտիներով» երկիրը թիվ մեկ ուժային կենտրոն դարձնելու հեռուն գնացող պլաններ ունի, որը հարցականի տակ է դնում ԱՄՆ-ի «Մեծ Մերձավոր Արևելք» աշխարհաքաղաքական ծրագիրը[9]: Իհարկե Սաուդյան Արաբիան, Իրանը և Եգիպտոսը իրենց ունեցած հնարավորություններով ու ռեսուրսներով կվիճարկեն այդ հավակնությունները, բայց չպետք է մոռանալ, որ այս գործում կարևոր է Ռուսաստանի դիրքորոշումը:

Կամա թե ակամա Ռուսաստանը և Թուրքիան ընդդեմ Արևմուտքի հայտնվեցին նույն խրամատում գրեթե այնպես, ինչպես բոլշևիկյան Ռուսաստանն ու քեմալական Թուրքիան 1920 թ. և ոչ միայն վերա-

---

[6] Տե՛ս https://ria.ru/world/20180130/1513571220.html?referrer_block=index_main_1

[7] **Тарасов С.** Путин решил поддержать Эрдогана // https://regnum.ru/news/polit/2247879.html

[8] Տե՛ս **Евстафьев Д.** Столкновение Евросоюза и Турции: кто кого? // http:// eurasia.expert/stolknovenie-evrosoyuza-i-turtsii-kto-kogo/

[9] Տե՛ս նույն տեղը:

կանգնեցին նախկին հարաբերությունները, այլև ռազմաքաղաքական համագործակցության պայմանավորվածություններ ձեռք բերեցին: Ստացվեց անտրամաբանական մի իրավիճակ. Արևմուտքի հետ նոր սառը պատերազմի մեջ մխրճված Ռուսաստանը համագործակցում է ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ և դեռ ավելին՝ հակաարևմտյան դիրքորոշում ունեցող Իրանի հետ հիմնում է սիրիական ճգնաժամի կարգավորման Աստանայի ձևաչափը, որտեղ ԵՄ-ն ընդհանրապես դերակատարություն չունի, իսկ ԱՄՆ-ի ազդեցությունը զգալիորեն սահմանափակված է: Պետք է նշել, որ հակաարևմտյան հենքի վրա ռուս-թուրքական մերձեցումը բավականին մեծացրել է Էրդողանի՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական դաշտերում մանևրելու հնարավորությունները և որոշակիորեն նպաստել նրա վարկանիշի բարձրացմանը: Եթե 2016 թ. պետական հեղաշրջման փորձից և արևմտամետ վարչապետ Դավութօղլուի հրաժարականից հետո նա հայտնվել էր միջազգային մեկուսացման շեմին, ապա 2017 թ. մարտից սկսած, շնորհիվ Ռուսաստանի հետ հարաբերությունների վերականգնման, նա ավելի համարձակ ու ինքնավստահ է գործում: Մյուս կողմից էլ առկա են նաև անհարմարավետության զգացումը և որպես գործընկեր անվստահելիության ախտանիշը. չէ որ ՆԱՏՕ-ի անդամը հայտնվել է հականատոյական ճամբարում:

Չկայացած «եռյակ դաշինքը»: Նոր քաղաքական իրողություն էր նաև Մոսկվայում Պուտինի հետ հանդիպումից հետո Էրդողանի հայտարարությունն այն մասին, որ ցանկանում է իրականացված տեսնել Ռուսաստան-Թուրքիա-Ադրբեջան համագործակցային ձևաչափը: Այդ մասին նա բարձրաձայնեց, բայց հակառակ նրա սպասումների՝ Պուտինն ընդհանրապես շրջանցեց այդ առաջարկը, և կարելի է ենթադրել, որ դա առայժմ մնում է չիրականացված ցանկություն[10]: Մերձավոր-արևելյան տարածաշրջանային խնդիրների հետազոտությամբ մասնագիտացած հայտնի քաղաքագետ Ստանիսլավ Տարասովը նշում է, որ Թուրքիայի վերլուծական կենտրոններում շրջանառվում է Էրդողանի կողմից Պուտինին առաջարկված գործարքի մասին տեղեկությունը, ըստ որի՝ Ռուսաստանը կարող է Մերձավոր Արևելքում վերականգնել մեծ տերության իր կարգավիճակը Թուրքիայի և Իրանի հետ համագործակցելով, իսկ Մոսկվա-Անկարա-Բաքու առանցքը հնարավոր կդարձնի ռուսական ազդեցության լիակատար ամրապնդումը Հարավային Կովկասում[11]: Պարզ է, որ այդ դեպքում հարվածի տակ կդրվի ռուս-հայկական ռազմավարական դաշինքը ՀԱՊԿ շրջանակներում: Մեր կարծիքով, Ալիևի սպասումներին հակառակ, ռուս-թուրքական

[10] Տե՛ս **Тарасов С.** Зачем Эрдогану «тройственный союз» с Россией и Азербайджаном // https://regnum.ru/news/polit/2248027.html

[11] Տե՛ս նույն տեղը:

համագործակցային տիրույթը չի ընդգրկում հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման գործընթացը, որովհետև Ռուսաստանը առաջնորդվում է իր պետական շահերով ու աշխարհաքաղաքական նպատակներով և ոչ թե Էրդողան-Ալիև տանդեմի ծրագրերով: Համոզված ենք, որ Իրաքը և Սիրիան թուրքական ազդեցության գոտի համարող Էրդողանը այս հարցով ամենայն հավանականությամբ բացասական արձագանքի է արժանանում կրեմլյան քաղաքական ընտրանու վերին օղակներում:

Քրդական գործոնը: ՌԴ-Թուրքիա հարաբերությունների նոր որակի ստեղծման մյուս գործոնը քրդական թնջուկն է, որն օրեցօր ավելի է կարևորվում տարածաշրջանում: Եթե Թուրքիայի և Իրաքի քրդերի հանդեպ դիրքորոշումների նույնականացում դեռևս չկա, ապա Սիրիայի քրդերի հարցում նկատվում է զգալի մերձեցում: Պարզ է, որ Թուրքիան չի կարող թույլ տալ քրդական նոր ինքնավարության ամրապնդումը իր սահմանների մոտ, ուստի միջազգային հարթակներում Սիրիայի քրդական կազմակերպությունները նա որակում է ահաբեկչական[12]: Մոսկվան բավականին ժամանակ համաձայն էր այս որակումներին: Իրավիճակը փոխվեց, երբ ԱՄՆ-ն իր հովանու տակ վերցրեց Ռուսաստանի դաշնակից Բաշար Ասադի վարչակարգը չճանաչող սիրական քրդերի ուժերը: Ամերիկամետ, հակաասադյան դիրքորոշումը նրանց վանեց Ռուսաստանից: Շղթայաբար այն առաջ բերեց ռուս-թուրքական դիրքորոշումների մերձեցում նաև այս ճակատում: Արդյունքը երևաց, երբ 2018 թ. հունվարին Մոսկվայի լուռ համաձայնությամբ Աֆրին քաղաքի շրջանում սկսվեց սիրիական քրդերի դեմ ուղղված թուրքական ռազմական գործողությունը[13]: Դրա համար ընտրվեց քաղաքական կամ ռազմական ոլորտի հետ առնչություն չունեցող բավականին անսովոր անուն՝ «Ձիթենու ճյուղ»[14]: Իհարկե, սա նշանավորում է քաղաքական նոր իրավիճակ 2018 թ. հենց սկզբին, որովհետև ռուս-թուրքական համաձայնությունը կարող է գլխիվայր շրջվել սիրիական ճակատում: Մեր կարծիքով՝ այստեղ ամեն ինչ չէ, որ հստակ է, կարող են և լինել անդրկուլիսյան համաձայնություններ Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև, շրջանառվում է նաև Սիրիայի հյուսիսում Ասադի վար-

---

[12] Սիրիայի քրդերն ունեն ժողովրդական ինքնապաշտպանության լավ կազմակերպված զորաջոկատներ (YPG և YPJ), որոնք մտնում են Սիրիական դեմոկրատական ուժերի ճակատ (Syrian Democratic Forces, SDF) և Դեմոկրատական միություն կոչված խմբավորումների մեջ: Էրդողանի վարչակարգը վերջինս համարում է Թուրքիայում գործող Քուրդիստանի բանվորական կուսակցության մասնաճյուղ և որակում է որպես ահաբեկչական՝ նման պահանջ դնելով նաև միջազգային բոլոր հարթակներում:

[13] Տե՛ս **Нерсисян Л.** Операция «Оливковая ветвь»: Россия выбрала Турцию, а не курдов // https://regnum.ru/news/2370325.html

[14] Սիրիայի քրդերի դեմ ուղղված նախորդ ռազմական գործողությունը կոչվում էր «Եփրատի վահան» (տե՛ս **Атасунцев А., Басисини А.** Боевая «Оливковая ветвь»: зачем Турция начала новую операцию в Сирии // https://www.rbc.ru/politics/21/01/2018/5a64a68f9a794754a86edf1d

չակարգին ընդդիմադիր պետական կազմավորում ստեղծելու գաղտնի պլանը[15]:

Եզրակացություն: ՌԴ-Թուրքիա հարաբերությունների վերականգնումը 2015-16 թթ. խորը ճգնաժամից հետո նպաստեց Էրդողանի մարտավարական դիրքերի ամրապնդմանը, բայց միաժամանակ լղոզեց և բովանդակազրկեց երկարաժամկետ ռազմավարությունը: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը և տարածաշրջանային ձեռնարկումները ամբողջովին չեն համընկնում ՆԱՏՕ-ի անդամի և ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակցի նախկին կարգավիճակին: Թուրքիայի ներկա իշխանություններին անհրաժեշտ է նոր՝ իրատեսական տնտեսական ռազմավարություն: ԵՄ անդամ դառնալու և եվրոպական ինտեգրացիայի մեջ ընդգրկվելու ռազմավարությունը նույնպես կաղում է: Դրան նպաստում են նաև Սաուդյան Արաբիայի և Քաթարի հետ ռազմավարական գործընկերություն հաստատելու ճանապարհին հայտընված խոչընդոտները: Անկարան ձգտում է վերանայել և վերակառուցել իր արտաքին տնտեսական հարաբերությունները, որի նպատակն է Թուրքիան վերածել Եվրոպայի էներգետիկ հիմնական հանգույցի և այդ կարգավիճակն օգտագործել որպես տարածաշրջանում եվրոպական քաղաքականության վրա ազդելու գործիք: Այս գործում Ռուսաստանի դիրքորոշումը և նրանից ստացած հավանությունը դառնում են կարևոր և վճռորոշ:

Վերջին մեկ տարվա իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռուս-թուրքական հարաբերությունների զարգացման դինամիկան դեռևս հեռու է կայունությունից: Իրավիճակից ելնելով՝ Էրդողանը կարող է փոխել իր արտաքին քաղաքական կողմնորոշումները, սրել իրավիճակը կամ ընդհակառակը՝ թուլացնել լարվածությունը: Ի դեպ՝ այդ վարքագիծը նա կարող է դրսևորել ինչպես Իրանի, այնպես էլ ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերություններում:

Բանալի բառեր – *Ռուսաստան, Թուրքիա, ԱՄՆ, Եվրոպական Միություն, Պուտին, Էրդողան, ամերիկյան ռազմավարություն, Սիրիա, մերձավորարևելյան իրադրություն, ռուս-թուրքական հարաբերություններ, քրդական գործոն*

ГАРИК КЕРЯН – ***Новые тенденции в российско-турецких отношениях в 2017 г.*** – Российско-турецкий политический диалог с каждым годом становится всё более сложным. В 2017 г., после периода охлаждения, сопровождавшегося обменом политическими и информационными ударами, прежние отношения были восстановлены. Эти изменения обусловлены новой расстановкой сил на Ближнем Востоке и на сирийском фронте. Импульсом для восстановления российско-турецких связей стало ухудшение отношений обеих стран с Западом. Другой причиной, побудившей

[15] Տե՛ս **Мейсан Т.** О действиях США на севере Сирии // Al-Watan (Сирия). Сеть Вольтер, 23 января 2018 // http://www.noravank.am/rus/articles/detail.php/ ?ELEMENT_ID=16393, աղբյուրը http://www.voltairenet.org/article199452.html

повысить уровень отношений между Россией и Турцией, явился становящийся всё более важным курдский фактор. Стороны значительно сблизили свои позиции по вопросу сирийских курдов.

Ключевые слова: *Европейский Союз, американская стратегия, Сирия, ближневосточная ситуация, российско-турецкие отношения, курдский фактор*

GARIK KERYAN – ***New Trends in Russian-Turkish Relations in 2017.*** – The Russian-Turkish political dialogue becomes more and more difficult year by year. In 2017, after a period of freezing relations with the political and information "shock", came the period of the restoration of relationships. The main reason of this is the new balance of power in the Middle East and on the Syrian fronts. Positive impulses for the restoration of Russian-Turkish relations are stipulated by the deterioration of relations between Russia and Turkey, on the one hand, with the West, on the other. Another factor of the new level of Russian-Turkish relations is the Kurdish issue, which is becoming more and more important in the region. There is a significant rapprochement on the issue of Syrian Kurds between Russia and Turkey.

Key words – *Russia, Turkey, USA, European Union, Putin, Erdogan, American strategy, Syria, the middle East situation, the Russian-Turkish relations, the Kurdish factor*